Հավելված՝ ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի Ավագանու
2021 թ. ապրիլի 14-ի N 82-Ա որոշման

ՀԱՅՏ

Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիաների

Ծրագրի անվանումը	Գյումրի քաղաքի երկրորդային 8 փողոցների և 1 հրապարակի հիմնանորոգում
Մարզ	Շիրակ
Համայնքը /համայնքները	Գյումրի
Համայնքի /բնակավայրի հեռավորությունը մայրաքաղաք Երևանից, ինչպես նաև մարզկենտրոնից	Գյումրի համայնքը Շիրակի մարզի մարզկենտրոնն է և մայրաքաղաքից գտնվում է 118 կմ հեռավորության վրա
Համայնքի /բնակավայրի բնակչությունը	112 412 մարդ
Սահմանամերձ, բարձր լեռնային համայնք /բնակավայրի	Գյումրի համայնքը չի հանդիսանում սահմանամերձ և/կամ բարձր լեռնային համայք
Համայնքի գլխավոր հատակագծի առկայություն	Համայնքն ունի գլխավոր հատակագիծ, որը հաստատվել է 03.03.2005 թ.-ին
Համայնքի բնակավայրի ենթակառուցվածքների վերաբերյալ հակիրճ տեղեկատվություն՝ հստակ նշելով՝ **- ջրամատակարարման և ջրահեռացման համակարգից օգտվող համայնքի բնակչության տոկոսը և ջրամատակարարման տևողությունը,** **- գազամատակարարման համակարգից օգտվող համայնքի բնակչության տոկոսը,** **- ոռոգման համակարգից օգտվող բնակչության տոկոսը և համայնքում գյուղատնտեսական հողերից ոռոգվող հողատարածքների**	 Գյումրի քաղաքն ամբողջությամբ (100%) ապահովված է ջրամատակարարման ու ջրահեռացման համակարգերով, առկա է 24 ժամյա ջրամատակարարում, որից օգտվում են բոլոր բնակիչները: Գերմանական KFW բանկի միջոցներով մետաղական հնամաշ խողովակները փոխարինվել են պլաստմասե խողովակներով՝ կազմելով քաղաքի ջրամատակարարման ցանցի 70%-ը: Քաղաքն ամբողջությամբ գազաֆիկացված է: Գազամատակարարման համակարգից օգտվող բնակչությունը կազմում է 97%: Ոռոգման համակարգից օգտվող բնակչության թիվը կազմում է 0% , քանզի

տոկոսը,	քաղաքում ոռոգման ցանց չկա:
- լուսավորության համակարգի առկայությամբ փողոցների տոկոսը՝ համայնքի ընդհանուր փողոցների մեջ և նշել էներգախնայող և ԼԵԴ լուսավորություն է, թե ոչ	Լրիվ կամ մասնակի փողոցային արտաքին լուսավորություն կա քաղաքի թվով 209 փողոցներից 193-ում, նրբանցքներում, փակուղիներում, անցումներում, որը կազմում է ընդհանուրի մոտ 93 %-ը: Լուսակետերի քանակը կազմում է մոտ 6800, որից էներգախնայող լամպերը կազմում են՝ մոտ 30 %, որն աստիճանաբար ավելացվում է: Միաժամանակ աշխատանքներ են տարվում ներթաղամասային բակային տարածքների լուսավորության ապահովման համար:
Ծրագրի ընդհանուր նկարագրությունը և դրա իրականացման անհրաժեշտությունը	Ծրագրով նախատեսվում է Գյումրի քաղաքում հիմնանորոգել 8 փողոցների առանձին հատվածներ և Վարդանանց հրապարակի հիմնանորոգում: 8 փողոցները չեն գտնվում Գյումրու պատմական կենտրոնում, հանդիսանում են երկրորդային փողոցներ: Գյումրի քաղաքի փողոցների ընդհանուր թիվը (փողոցներ, նրբանցքներ, փակուղիներ) կազմում է 209, որոնց ընդհանուր երկարությունը կազմում է 181,0 կմ, այդ թվում՝ 1.բարեկարգված (որևէ ծածկույթ ունեցող)-156,2 կմ (2020 թ. դրությամբ) որից՝ ասֆալտբետոնե- 106,2 կմ խճից, կոպիճից մշակված փողոցներ- 50 կմ 2. հողային կամ ծածկույթ չունեցող-29 կմ Բոլոր փողոցների, անցումների, նրբանցքների, հրապարակների ընդհանուր մակերեսը (ծածկույթով և առանց ծածկույթի) 2.9 մլն մ^2 է, որից բարեկարգված՝ 1.251 մլն մ^2 : Հիմնանորոգվելու են փողոցները՝ իրենց հարակից մայթերով, որոնք ներթաղամասային փողոցներ են և որոնց հարող հատվածներում գործում են դպրոցներ և մանկապարտեզներ: Ծրագրով նախատեսված հատվածներում վերանորոգման աշխատանքներ կատարվել են շուրջ 42 տարի առաջ: Ընդհանուր ծավալը՝ 2848 մ ընդհանուր երկարությամբ և 27935 մ^2 երթևեկելի մասով, 13606 մ^2 մայթերով: Փողոցների երթևեկելի մասերում և մայթերում նախատեսվող աշխատանքների համապարփակ տեղեկատվությունը կից հավելվածում:

	Նախատեսվում է հիմնանորոգել նաև Վարդանանց հրապարակը, որը Գյումրի համայնքի կենտրոնական հրապարակն է: Վերջին անգամ հրապարակը հիմնանորոգվել է 2013 թ.-ին, սակայն հետիոտնային գծանշումները թարմացվում են ամեն տարի՝ գարնան սկզբին: Հիմնանորոգման արդյունքում նախատեսվում է հետիոտնային անցումները, որոնք ութն են, դարձնել դեղին սալահատակ, որի արդյունքում գծանշումների խնդիրը ևս կլուծվի: Հիմնանորոգվող հրապարկի ընդհանուր մակերեսը կազմում է 9836 մ^2 Հավելենք նաև, որ ՎԶԵԲ-ի ֆինանսավորմամբ 2020 թվականին նախատեսվում էր իրականացնել երկրորդ փուլում ընդգրկված երեք չափաբաժիններով 9-12 մետր լայնությամբ և 13 կմ երկարությամբ 23 փողոցների ու հարակից մայթերի հիմնանորոգման աշխատանքներ, սակայն ստեղծված համաճարակային, այնուհետև պատերազմական իրավիճակից ելնելով աշխատանքները մնացել են անավարտ, որոշ մասերում, դեռ մեկնարկ չի տրվել: 2020 թվականի սուբվենցիոն ծրագրով նախատեսված էր 17 երկրորդային փողոցի հիմնանորոգում, որից ավարտին է հասցվել 15 փողոց, կազմելով ընդհանուր 4,2 կմ երկարությամբ ճանապարհ:Երկրորդական 2 փողոցի հիմնանորոգումը նախատեսվում է իրականացնել այս տարի, ընդհանուր՝ 1,6 կմ երկարությամբ: 2021 թ. ՎԶԵԲ վարկային միջոցներով պլանավորվում է հիմնանորոգել թվով 22 փողոց, ընդհանուր 14,8 կմ երկարությամբ և մեկ հրապարակ՝ 13 900 մ^2 մակերեսով, որից երթևեկելի մաս՝ 11 000 մ^2, 2900 մ^2 մակերեսով հիմնանորոգված մայթեր:
Ծրագրի ակնկալվող արդյունքները, որոնց միջոցով պետք է հասնել ծրագրի իրականացման նպատակին	Ծրագրի իրականացման արդյունքում քաղաքի թվով 8 փողոցներ կհիմնանորոգվեն, կազմելով ընդհանուր՝ 1. 2848 մ երկարությամբ և 27935 մ^2 մակերեսով երթևեկելի ճանապարհներ: 2. 13606 մ^2 մակերեսով հիմնանորոգված մայթեր Նախապես ընտրված հատվածները կենտրոնական փողոցներն իրար միացնող հատվածներ, ինչպես նաև դեպի ենթակառուցվածքներ տանող ճանապարհներ են, որոնցով ամեն օր երթևեկում են հարյուրավոր քաղաքացիներ և մասնավորապես երեխաներ: Գյումրի համայնքի հնգամյա զարգացման ծրագրում (2017-2021) բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության ոլորտի կապիտալ ծրագրերում ներառված է ,Փողոցների բարեկարգումե ծրագիրը, որը կազմվել է՝ ելնելով մի շարք առաջնահերթություններից, մասնավորապես՝

	• կենտրոնական փողոցներն իրար միացնող հատվածներ • դեպի մանկապարտեզ տանող ճանապարհներ • դեպի դպրոց տանող ճանապարհներ Ծրագրերի արդյունքում համայնքապետարանի գլխավոր նպատակն է ստեղծել նոր որակի քաղաքային միջավայր՝ հարմարավետ և անվտանգ տեղաշարժի ապահովմամբ և զբոսաշրջության գրավչության ավելացմամբ: Ծրագրի իրականացման արդյունքում կունենանք հիմնանորոգված մեկ հրապարակ, ուր այցելում են հազարավոր զբոսաշրջիկներ: Վերջին տարիներին Գյումրու զբոսաշրջային գրավչությանը զուգընթաց ավելանում է նաև քաղաք այցելող զբոսաշրջիկների և հյուրերի քանակը, ուստի անհրաժեշտ է, որպեսզի քաղաքի կենտրոնական հրապարակը լինի բարեկարգ, ունենա գեղեցիկ և ժամանակակից տեսք:
Ծրագրի արդյունքներին հասնելու գործողությունները և միջոցառումները	• Կազմել նախագծա-նախահաշվային փաստաթղթեր • Կազմակերպել օրենքով սահմանված կարգով մրցույթ • Մրցույթի արդյունքների ամփոփում, պայմանագրերի կնքում • Հետևել կատարվող շինարարական աշխատանքների որակին և ծրագրի վերջնական արդյունքին • Աշխատանքի հանձնում-ընդունում և շահագործում
Ծրագրի իրականացման արդյունքում համայնքին սեփականության իրավունքով պատկանող հիմնական միջոցների արժեքի ավելացում բացառությամբ բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության գույքի	Ծրագրով նախատեսված ծախսերը կապիտալ բնույթի են և իրականացման արդյունքում Գյումրի համայնքին սեփականության իրավունքով պատկանող հիմնական միջոցների արժեքը կավելանա 736 267 200 (յոթ հարյուր երեսունվեց միլիոն երկու հարյուր վաթսունյոթ հազար երկու հարյուր) ՀՀ դրամով:
Ծրագրի ազդեցությունը համայնքի և շահառուների վրա	Ծրագրի շահառուներն են Գյումրի քաղաքի բնակիչները, Գյումրի ժամանող մեքենաների վարորդներն ու ուղևորները, ինչպես նաև զբոսաշրջիկները և քաղաք այցելով հյուրերը: Փողոցները ներթաղամասային են, հարակից՝ դպրոցներին և մանկապարտեզների: Բնակիչները հնարավորություն կունենան երթևեկել անվտանգ փողոցներով, իսկ հետիոտները՝ մաքուր և բարեկարգ մայթերով:Բարեկարգ փողոցների արդյունքում օդի աղտոտվածությունը ևս կնվազի, որն էլ անմիջականորեն դրական ազդեցություն կունենա բնակիչների առողջության վրա:
Նշել ծրագրի իրականացման ընթացքում ստեղծվող ժամանակավոր և հիմնական աշխատատեղերի քանակը և դրանց նկարագրությունը	Ծրագրի իրականացման ընթացքում համայնքապետարանի կողմից ստեղծվող հիմնական աշխատատեղերի քանակը հինգն է, իսկ մասնավոր հատվածի (պետական գնումների համապատասխան ընթացակարգով հաղթող ճանաչված մասնակցի) կողմից ստեղծվող ժամանակավոր/հիմնական աշխատատեղերի քանակը ներկա պահին

հստակ չէ:

Համայնքի նախորդ տարվա բյուջեն և բյուջեի կատարողականը

Նախորդ տարվա բյուջեն՝ 5 277 947 186 ՀՀ դրամ .			
	Պլան	Փաստացի	Տոկոս
Ընդամենը համայնքի բյուջեի եկամուտները այդ թվում՝	4,709,946,368	4,648,787,938	98.7
-Վարչական բյուջեի եկամուտներ, որից	4,154,392,268	3,940,437,253	94.8
- Սեփական եկամուտներ	1,445,829,961	1,246,068,998	86.2
-Ֆոնդային բյուջեի եկամուտներ	102,271,500	322,102,293	314.9
Ընդամենը համայնքի բյուջեի ծախսեր, որից	5,277,947,186	4,432,904,052	84.0
- Վարչական բյուջեի ծախսեր	3,733,753,284	3,359,375,292	90.0
-Ֆոնդային բյուջեի ծախսեր	1,544,193,903	1,073,528,760	69.5
Համայնքի ֆոնդային բյուջեի փաստացի ծախսերը, որից			
- ճանապարհաշինություն	1,156,773.000	869,478,000	75.2
- ջրամատակարարում			
- փողոցային լուսավորություն	13,365,000	9,200,000	68.8
- շենք շինութ. ձեռքբերում			
- այլ մեքենաներ և սարքավոր.	126,965,700	63,218,944	49.8

Համայնքի ընթացիկ տարվա բյուջեն

Ընթացիկ տարվա բյուջե՝ 6 105 472 312 ՀՀ դրամ ,

	Պլան
Ընդամենը համայնքի բյուջեի եկամուտների պլանավորում այդ թվում՝	5,350,530,390
- Վարչական բյուջեի եկամուտներ, որից	4,645,584,690
- սեփական եկամուտներ	1,732,882,090
- Ֆոնդային բյուջեի եկամուտներ	113,380,000

Ընդամենը համայնքի բյուջեի ծախսեր, որից	6,105,472,312
- Վարչական բյուջեի ծախսեր	4,014,769,258
-Ֆոնդային բյուջեի ծախսեր	2,090,703,054
Համայնքի ֆոնդային բյուջեի պլանավորված ծախսերը, որից	
- Շենքերի և շինությունների կառուցում	20,680,000
- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	1,527,006,254
- Տրանսպորտային սարքավորումներ	445,250,000
- Վարչական սարքավորումներ	6,993,000
- Այլ մեքենաներ և սարքավորումներ	58,362,200
-Աճեցվող ակտիվներ	5,400,000
- Նախագծահետազոտական ծախսեր	27,011,600

Գյումրի համայնքի 2021 թվականի բյուջեի մուտքերի հաշվին սույն ծրագրի իրականացումը հնարավոր չէ: Այս հանգամանքը պայմանավորված է նրանով, որ համայնքի բյուջեի ֆինանսական միջոցները գրեթե ամբողջությամբ ուղղվում է համայնքի պարտադիր խնդիրների իրականացմանը, մասնավորապես

- Վարչական բյուջեի ծախսեր	4,014,769,258

Համայնքի ընթացիկ տարվա բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի (ներառյալ ֆինանսական համահարթեցման դոտացիայի գծով կանխատեսվող մուտքերը) հաշվին նշված ծրագրի իրականացման անհնարինության հիմնավորումը (համապատասխան հաշվարկներով

-Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	971,760,100.0
-Էներգետիկ ծառայություններ	226,231,100.0
-Կոմունալ ծառայություններ	44,681,800.0
-Կապի ծառայություններ	9,877,300.0
-Ապահովագրական ծախսեր	4,577,000.0
-Գույքի և սարքավորումների վարձակալություն	8,961,000.0
-Արտագերատեսչական ծախսեր	124,000.0
-Ներքին գործուղումներ	35,555,600.0
-Արտասահմանյան գործուղումների գծով ծախսեր	2,400,000.0
-Տեղակատվական ծառայություններ	5,355,400.0
-Ներկայացուցչական ծախսեր	11,500,000.0
-Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	55,131,300.0
-Մասնագիտական ծառայություններ	31,434,900.0
-Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	168,507,902.4
-Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	7,347,500.0

-Գրասենյակային նյութեր և հագուստ	10,924,500.0
-Գյուղատնտեսական ապրանքներ	3,465,000.0
-Տրանսպորտային նյութեր	111,285,410.0
-Հատուկ նպատակային այլ նյութեր	54,954,800.0
-Ներքին վարկերի տոկոսավճարներ	140,110,300.0
-Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին	1,789,587,546.0
-Սուբսիդիաներ ոչ պետական (ոչ համայնքային) ոչ ֆինանսական կազմակերպություններին	32,400,000.0
-Կրթական, մշակութային և սպորտային նպաստներ բյուջեից	5,530,000.0
-Բնակարանային նպաստներ բյուջեից	1,330,000.0
-Այլ նպաստներ բյուջեից	68,955,000.0
-Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին	167,326,800.0
-Պարտադիր վճարներ	17,665,000.0
-Այլ ծախսեր	27,790,000.0

Ֆինանսական միջոցներից մի փոքր մաս էլ ուղղված է համայնքի կամավոր խնդիրների լուծմանը, որով փորձ է արվում ինչ-որ չափով մեղմելու համայնքի կարիքավոր և սոցիալապես խիստ անապահով բնակչության հոգսերը:

Ծրագրի ընդհանուր բյուջեն, այդ թվում՝ - շինարարական օբյեկտների նախագծման արժեքը _____ դրամ,	*736 267 200 (յոթ հարյուր երեսունվեց միլիոն երկու հարյուր վաթսունյոթ հազար երկու հարյուր) ՀՀ դրամ (100%)*
- նախագծանախահաշվային փաստաթղթերի պետական փորձաքննության ծառայության արժեքը՝ _____ դրամ,	*10 294 008(տասը միլիոն երկու հարյուր իննսունչորս հազար ութ)* ՀՀ դրամ
- տեխնիկական հսկողության ծառայությունների արժեքը՝ _____ դրամ,	*12 076 007 (տասներկու միլիոն յոթանասունվեց հազար յոթ)* ՀՀ դրամ
- հեղինակային հսկողության ծառայությունների արժեքը՝ _____ դրամ, - գոյություն ունեցող շենք-շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ փորձաքննության ծառայության արժեքը՝ _____ դրամ,ինչպես նաև առանձին	*3 354 450 (երեք միլիոն երեք հարյուր հիսունչորս հազար չորս հարյուր հիսուն)* ՀՀ դրամ

Ներկայացնել հասարակական շենքերի օգտագործման գույքի կառուցման/նորոգման դեպքում՝ էներգախնայողության միջոցառումների արժեքը _____ դրամ	
Համայնքի կողմից ներդրվող մասնաբաժնի չափը	*441 760 320 (չորս հարյուր քառասունմեկ միլիոն յոթ հարյուր վաթսուն հազար երեք հարյուր քսան) ՀՀ դրամ դրամ (60 %)*
Այլ ներդրողներ	*0 դրամ (0 %), նշել ներդրողի անունը*
Ծրագրի իրականացման տևողությունը	*Սկիզբը մայիս 2021 թ.* *Տևողությունը 5 ամիս*
Ծրագրի ծախսերը	***736 267 200 (յոթ հարյուր երեսունվեց միլիոն երկու հարյուր վաթսունյոթ հազար երկու հարյուր) ՀՀ դրամ*** *Ծախսերն ավելի ճշգրիտ կներկայացնվեն նախագծա-նախահաշվային փաստաթղթերը կազմելուց հետո:*
Ամսաթիվ	09 մարտ 2021 թ.

Համայնքի սուբվենցիոն ծրագրերի փորձագետ
Հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստը

Էլզա Գինեցյան
+(374) 94 54 54 73
elis.ginetsyan@gmail.com

Գյումրի համայնքի ղեկավար

Սամվել Բալասանյան
(անունը, ազգանունը)